«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ԲՅՈՒՋԵ՝ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆԵԼԻ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ, ՔԱՋԱՐԱՆԻ և ՄԵՂՐԻԻ ՀՈՒՀ-ԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՀԱՍՏԱՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ԶԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Կապանի ուսուցիչներ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող « Բյուջե

բոլորի համար հասանելի» » ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն «Կապանի ուսուցիչներ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

CENTER FOR EDUCATIONAL RESEARCH AND CONSULTING

Զեկույցը պատրաստվել է Կրթական Հետազոտությունների և Խորհրդատվությունների Կենտրոնի կողմից

Բովանդակություն

Աղյուսակներ և Գծապատկերներ 3
Հապավումներ և բացատրություններ 4
Ներածություն 5
Հետազոտության մեթոդաբանություն 7
Դպրոցի բյուջեի պլանավորման և թափանցիկության հետ կապված իրավական կարգավորումները 9
Դպրոցի կառավարման և խորհրդատվական մարմինների իրավասությունները 11
Դպրոցի բյուջեի պլանավորման գործընթացը և հանրայնացումը 13
Դպրոցի կառավարման և խորհրդատվական մարմինների մասնակցությունը բյուջեի մշակման աշխատանքներում 17
Բյուջեի հասանելիությունը և շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը 17
Մասնակցությունը բյուջեի մշակման գործընթացներին և հաշվետվողականության ապահովում 22
Եզրակացություններ 28
Առաջարկություններ 30
Հավելվածներ 33
Հավելված 1. Ուսումնասիրված իրավական ակտերը 33
Հավելված 2. Հետազոտության գործիքներ 34

Աղյուսակներ և Գծապատկերներ

Աղյուսակ 1 Ընտրված դպրոցների ցանկ 7
Աղյուսակ 2 Ֆոկուս խմբային քննարկումների քանակն ըստ համայնքների և խորհուրդների 8
Աղյուսակ 3 Տեղեկացվածությունը դպրոցի բյուջեի կառուցվածքի մասին, հատվածներ ՖԽ քննարկումներից.....19
Աղյուսակ 4 Մասնակցություն բյուջեի պլանավորման աշխատանքներում, կարծիքներ 22
Աղյուսակ 5 Առավել հրատապ լուծում պահանջող խնդիրները.....25

Գծապատկեր 1 Որքանո՞վ է տեղեկացված Ձեր դպրոցի տարեկան բյուջեի կառուցվածքի մասին: 20
Գծապատկեր 2 Որքանո՞վ է թափանցիկ իրականացվում դպրոցի բյուջեի մշակման գործընթացը Ձեր դպրոցում: 20
Գծապատկեր 3 Մասնակցում եք արդյոք բյուջեի պլանավորման աշխատանքներին: 23
Գծապատկեր 4 Մասնակցում եք արդյոք բյուջեի պլանավորման աշխատանքներին, ըստ դպրոցների.....24
Գծապատկեր 5 Ինչպես եք մասնակցում բյուջեի պլանավորման աշխատանքներին.....24

Հապավումներ և բացատրություններ

ԱԽ	Աշակերտական խորհուրդ
ԾԽ	Ծնողական խորհուրդ
ՄԽ	Մանկավարժական խորհուրդ
ԴԽ	Դպրոցական խորհուրդ. հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմին
ՀՈՒՀ	Հանրակրթական ուսումնական հաստատություն
ՖԽ	Ֆոկուս խումբ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Ներածություն

«Բյուջե՝ բոլորի համար հասանելի» ծրագիրն իրականացվել է Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ի կողմից: Հետազոտության մեթոդաբանությունը և զեկույցը մշակել է Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը:

Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել Սյունիքի մարզի ՀՈՒՀ-երում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման թափանցիկության և հաշվետվողականության գործընթացները՝ մասնակցային մոնիտորինգի և ջատագովության միջոցով:

Ծրագրի իրականացման հիմնական անհրաժեշտությունը բխում է շահագրգիռ կողմերի այն մտահոգությունից, որ Հայաստանում ՀՈՒՀ-երի տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը պատշաճ կերպով չի ապահովվում: Միևնույն ժամանակ, ենթադրվում է, որ ՀՈՒՀ կառավարման և խորհրդակցական մարմինները (դպրոցական Խորհուրդը (ԴԽ), աշակերտական խորհուրդ (ԱԽ), ծնողական խորհուրդ (ԾԽ), մանկավարժական խորհուրդ (ՄԽ)) և շահագրգիռ կողմերը բավարար մասնակցայնություն և վերահսկողություն չունեն գործընթացներում: Սույն զեկույցում անդրադարձ է արվում նշված խնդիրների ուսումնասիրությանը:

Ներկայումս Սյունիքի մարզում գործում է 118 ՀՈՒՀ, որոնց թիվն ըստ տեսակների ներկայացված է ստորև.

- Միջնակարգ դպրոցներ - 75,
- Հիմնական դպրոցներ - 37,
- Ավագ դպրոցներ - 5,
- Կրթահամալիր - 1:

ՀՀ կառավարությունը 2014 թվականի հուլիսի 31-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ստանձնեց պարտավորություն մշակելու և ներդնելու ՀՈՒՀ տարեկան բյուջեի պլանավորման եվ բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության նոր կարգ: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) աջակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մշակեց վերոնշյալ կարգը և ՀՀ ԿԳ նախարարի 2015 թ. մարտի 30-ի N 205 Ա/Ք հրամանով հաստավեց «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության» կարգը:

ՀՀ կառավարությունը 6 հուլիսի 2017 թվականի N 801-Ն որոշմամբ հաստատեց «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության նոր տարբերակը, որի 49-ից 66 հոդվածները ներառեցին վերոհիշյալ կարգի հիմնական դրույթները:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի(ԿՏԱԿ) կողմից 2016թ. ստեղծվեց հանրակրթական դպրոցների ինտերնետային համալիր էջ՝ http://schoolsite.am/ և ՀՀ յուրաքանչյուր հանրակրթական դպրոց ունի իր կայքէջը, որտեղ ըստ ընդունված կարգի պետք է տեղադրվեն դպրոցի տարեկան բյուջեն, ինչպես նաև եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Ըստ ընդունված կարգի, ՀՈՒՀ բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկումներ պետք է կազմակերպվեն մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, ՀՈՒՀ կառավարման խորհրդի, քաղաքացիների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով:

Սույն ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի 15 ՀՈՒՀ-երում իրականացվել է բյուջեների նախագծման, հաստատման և հաշվետվողականության գործընթացների մոնիթորինգ, ինչպես նաև իրականացնել ջատագովություն՝ բարելավելով ՀՈՒՀ կառավարման, խորհրդակացական մարմինների և քաղաքացիաների մասնակցայնության մեխանիզմները:

Հետազոտությունն իրականցվելու է Սյունիքի մարզի Կապան, Քաջարան, Մեղրի խոշորացված համայնքներում:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության նպատակը, խնդիրները

Սույն հետազոտության **նպատակն է** բացահայտել ՀՈՒՀ տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների մասնակցայնության և թափանցիկության հետ կապված խնդիրները՝ իրականացնելով մոնիտորինգ:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել ՀՈՒՀ-երի տարեկան բյուջեի պլանավորման գործընթացները:
- Ուսումնասիրել ՀՈՒՀ-երի տարեկան բյուջեի հաշվետվողականության գործընթացները և գնահատել թափանցիկությունը:
- Պարզել, թե ինչպիսի մասնակցություն ունեն ՀՈՒՀ կառավարման և խորհրդակցական մարմինները (Աշակերտական խորհուրդ/ԱԽ, Ծնողական խորհուրդ/ԾԽ, Մանկավարժական խորհուրդ/ՄԽ/) և շահագրգիռ կողմերը բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացներում:

1. Հետազոտության ընտրանքը

Հետազոտության իրականացման նպատակով ընտրվել են 15 դպրոց Կապան , Քաջարան և Մեղրի համայնքներից: Ընտրված դպրոցների ցանկը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1 Ընտրված դպրոցների ցանկ

1	Կապան թիվ 2 ավագ դպրոց	9	Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց
2	Կապանի թիվ 9 ավագ դպրոց	10	Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց
3	Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց	11	Լեռնաձորի հիմնական դպրոց
4	Կապան թիվ 1 հիմնական դպրոց	12	Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոց
5	Կապանի թիվ 5 հիմնական դպրոց	13	Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց
6	Կապանի թիվ 7 հիմնական դպրոց	14	Ագարակի միջնակարգ դպրոց
7	Կապանի թիվ 13 հիմնական դպրոց	15	Կարճևանի հիմնական դպրոց
8	Կապանի թիվ 3 կրթահամալիր		

2. Տեղեկատվության ստացման մեթոդները

Հետազոտության ընթացքում տեղեկատվության ստացման նպատակով կիրառվել են հետևյալ մեթոդները.

2.1. Փաստաթղթերի վերլուծություն մեթոդ

ՀՈՒՀ-երում բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների թափանցիկության ու հաշվետվողականության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու մասին ուսումնասիրվել է նաև ֆինանսական փաստաթղթերի հասանելիությունը և

թեմային առնչվող այլ փաստաթղթեր: Որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրներ օգտագործվել են.

- ՀՈՒՀ տարեկան բյուջեի պլանավորման եվ բյուջեի տարեկան ծախսերին առնչվող ՀՀ օրենսդրությունը,
- Հանրակրթական դպրոցների կայքէջում (http://schoolsite.am/) առկա թիրախ դպրոցների ֆինանսական փաստաթղթերը:

2.2. Ֆոկուս խմբային քննարկումներ

Բյուջեի հասանելիության, թափանցիկության և բյուջեի պլանավորման աշխատանքներում դպրոցների կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավածության մասին համակողմանի պատկերացում կազմելու նպատակով հետազոտության ընթացքում իրականացվել է թվով 60 ֆոկուս խմբային (ՖԽ) քննարկում հետևյալ ձևաչափով:

Աղյուսակ 2 Ֆոկուս խմբային քննարկումների քանակն ըստ համայնքների և խորհուրդների

	Կապանի ՀՈՒՀ-եր	Քաջարանի ՀՈՒՀ-եր	Մեղրիի ՀՈՒՀ-եր
Ծնողական խորհուրդներ	8	3	4
Մանկավարժական խորհուրդներ	8	3	4
Դպրոցական խորհուրդներ	8	3	4
Աշակերտական խորհուրդներ	8	3	4

Ընդհանուր առմամբ ՖԽ քննակումներին մասնակցել են դպրոցների կառավարման և խորհրդակցական մարմինների 600 անդամ, որոնց հետ քննարկմանը զուգընթաց իրականացվել է հարցում անկետավորման մեթոդով:

2.3. Հարցումներ անկետավորման մեթոդով Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցների հետ

ՀՈՒՀ-երի տարեկան բյուջեների պլանավորման գործընթացում ՖԽ քննարկումների մասնակիցների ներգրավվածությունը պարզելու նպատակով նրանց հետ իրականացվել է հարցում անկետավորման մեթոդով: Ստացված տեղեկատվությունը վերլուծվել է քանակական եղանակով:

2.4. Խորին հարցազրույցներ ՔՀԿ-ներկայացուցիչների հետ

Պարզելու համար, թե ինչպես են ՔՀԿ-ները համագործակցում դպրոցների հետ բյուջեի պլանավորման և թափանցիկության ապահովման համատեքստում իրականացվել են նաև խորին հարցազրույցներ թիրախ համայնքների թվով 10 ՔՀԿ ներկայացուցիչների հետ:

Դպրոցի բյուջեի պլանավորման և թափանցիկության հետ կապված իրավական կարգավորումները

Սույն հետազոտության շրջանակներում ՀՈՒՀ-ների բյուջեներն ուսումնասիրվել են հետևյալ տեսանկյուններից.

- Համապատասխան փաստաթղթերի հասանելիությունը հանրության և շահագրգիռ կողմերի համար,
- Բյուջեի մշակման աշխատանքներում դպրոցական և խորհրդատվական մարմինների մասնակցություն:

Այլ կերպ ասած այս հետազոտության շրջանակներում բյուջեների եկամուտների և ծախսերի արդյունավետության խորքային տնտեսագիտական վերլուծություն չի իրականացվել:

Սյունիքի մարզի թիրախային համայնքներում ՀՈՒՀ-երի ֆինանսական գործունեության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.

- Հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը[1],
- Դպրոցների կառավարման և խորհրդակցական մարմինների նիստերի առցանց հասանելի արձանագրությունները:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: Ուսումնական հաստատության ֆինանսավորումը պետական բյուջեից ըստ իրականացվող կրթական ծրագրերի՝ կախված է սովորողների թվից: Նույն հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ ստանալ լրացուցիչ ֆինանսավորում տարբեր նպատակներով (իրականացնելու հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար և այլն):

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունը կարող է զբաղվել նաև ձեռնարկատիրական գործունեությամբ միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Հանրակրթական դպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

- Վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,

[1] Հավելված 1

- Բարեգործական նպատակային ներդրումները,
- ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները:[2]

Դպրոցներում ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնելու հնարավորությունները ներկայացված են «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրության մեջ: Մասնավորապես ներկայացված են հետևյալ տեսակները.

1. Լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում,
2. Համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում,
3. Ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում,
4. Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,
5. Սովորողների սննդի կազմակերպում:

Ներկայումս դպրոցների ֆինանսավորման գործող բանաձևի առանցքային փոփոխականը դպրոցում սովորող աշակերտների թիվն է[3]: Բացի աշակերտների թվից բանաձևում ներառված են նաև հետևյալ ծախսերը.

- Պահպանման ծախս,
- Սոցիալապես անապահով երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման գումարը,
- Տարրական դասարանների և նախակրթարանների սովորողների սննդի գումարը:

Հետազոտության մասնակիցների կարծիքով այս բանաձևը չի ապահովում դպրոցների նվազագույն կարիքներին համապատասխան ֆինանսավորում հատկապես թերբեռնված դպրոցների դեպքում: Ներկայումս քննարկման փուլում է ֆինանսավորման նոր բանաձևը, որի համաձայն առաջարկվում է դպրոցների ֆինանսավորման բանաձևում նախատեսել նաև նոր փոփոխական՝ դասարանների թիվը:

Դպրոցների կառավարման խորհուրդների անդամների և ծնողական խորհուրդների անդամների հետ իրականացված ՖԽ քննարկումները, ինչպես նաև ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ հետազոտության թիրախ հանդիսացող դպրոցները գերազանցապես ֆինանսավորվում են պետական բյուջեից: Վերջին տարիների ընթացքում այլ աղբյուրից ֆինանսավորում ստացած դպրոցների թիվը շատ փոքր է: Չնայած

[2] ՀՀ կառավարության 2002թ" հուլիսի 25-ի N1392-Ն որոշման հավելված 3 «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն, 7-րդ բաժնի 142-րդ կետ

[3] ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի N1262-Ն որոշում

այն հանգամանքին, որ ըստ հետազոտության մասնակիցների, դպրոցները ժամանակ առ ժամանակ դիմում են տարածաշրջանում գործող մասնավոր կազմակերպություններին (Օրինակ՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ), ֆինանսական աջակցության ստանալու նպատակով:

Եթե հաշվի առնենք, թե ինչ աղբյուրներից են դպրոցները ֆինանսավորում ստացել, ապա միայն բարեգործական աջակցությունն է որոշակի կշիռ կազմում, իսկ վարձակալությունից, վճարովի կրթական ծառայությունից ֆինանսավորման այլ հնարավորություններից ստացված գումարները կամ շատ փոքր են, կամ էլ ընդհանրապես բացակայում են:

Դպրոցի կառավարման և խորհրդատվական մարմինների իրավասությունները

Հետազոտության շրջանակներում իրականացվել է ՖԽ քննարկումներ դպրոցի կառավարման և խորհրդատվական հետևյալ մարմինների հետ.

- Դպրոցի խորհուրդ,
- Ծնողական խորհուրդ,
- Մանկավարժական խորհուրդ,
- Աշակերտական խորհուրդ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի իրավասություններով են օժտված այս մարմիններից յուրաքանչյուրը դպրոցի բյուջեի պլանավորման, ծախսերի վերահսկողության և թափանցիկության համատեքստում: Իսկ թե, որքանով են այդ իրավասությունները և լիազորությունները կիրառվում ուսումնասիրված դպրոցներում կանդրադառնանք հաջորդ գլխում:

Դպրոցի խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որը ձևավորվում է նախարարության սահմանված կարգով: Դպրոցի ֆինանսական գործունեությանն առնչվող ԴԽ իրավասությունները ներկայացված են ստորև[4].

1. Քննարկում և հավանություն է տալիս դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:
2. Կարող է սահմանել պակաս խտությամբ դասարան՝ դպրոցի լրացուցիչ ֆինանսական միջոցների հաշվին:
3. Տնօրենի ներկայացմամբ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը,

[4] «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն

տարիֆիկացիոն ցուցակները տալիս է հավանություն և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնին:

4. Քննարկում է ֆինանսատնտեսական գործունեության իրականացման հաշվետվությունները:
5. Հիմնադրի սահմանած կարգով սահմանում է դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները:
6. Լսում է գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները և տալիս հավանություն:
7. Խորհուրդն, անհրաժեշտության դեպքում, իր որոշմամբ, իրավունք ունի ծանոթանալու դպրոցի բոլոր փաստաթղթերին՝ պահպանելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Դպրոցի խորհուրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև լիազորված մարմնի, տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

Ծնողական խորհրդի մասնակցությունը դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությանը ամրագրված է մի քանի իրավական փաստաթղթերում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանվում է, որ ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ, այդ թվում՝ ծնողական խորհուրդ, որի ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Համաձայն դպրոցի օրինակելի կանոնադրության հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

Ծնողական խորհուրդների հիմնական լիազորությունները, որոնք որոշ չափով կապված են դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության հետ ներկայացված են ստորև[5].

[5] «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն

- Լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները,
- Մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների,
- Մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալուն,
- Ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ և այլն:

Դպրոցի ֆինանսական գործընթացներին ԾԽ մասնակցության հիմնական ձևաչափն այն է, որ իր կազմից առաջարկում է դպրոցի կառավարման խորհուրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում ծնողական խորհրդում փակ քվեարկությամբ՝ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն:

Դեռևս մինչև 2017թ.-ի հուլիս ամիսը ԾԽ-ն կարող էր մասնակցել նաև ՀՈՒՀ վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին, սակայն ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի 801-Ն որոշմամբ հաստատված նոր օրինակելի կանոնադրությամբ այդ կետը վերացվել է: Արդյունքում ԾԽ-ն զրկվել է վճարովի ծառայություններին կամ արտաբյուջետային միջոցների տնօրինման հարցերում իր ունեցած լիազորությունից, ինչն նվազեցնում է ծնողական հանրույթի կողմից դպրոցի կառավարմանը մասնակցելու մակարդակը:

Մանկավարժական և աշակերտական խորհուրդները դպրոցի ֆինանսական գործունեության հետ առնչվում են միայն մասնակցելով բյուջեի նախագծի քննարկմանը: Մասնավորապես, տնօրենը կազմակերպում է բյուջեի նախագծի քննարկում և մանկավարժներից և աշակերտներից ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա մշակում է նախագծի վերջնական տարբերակը:

Դպրոցի բյուջեի պլանավորման գործընթացը և հանրայնացումը

Դպրոցի բյուջեի պլանավորումը տեղի է ունենում հստակ ընթացակարգով, որն ամրագրված է ՀՈՒՀ օրինակելի կանոնադրության մեջ: Դպրոցի տնօրենը յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից սկսած պլանավորում և կազմում է դպրոցի առաջիկա տարվա բյուջեի (ծախսերի նախահաշվի՝ այսուհետ բյուջե) նախագիծը:

Բյուջետային գործընթացը բաժանվում է 3 փուլի.

1) բյուջեի պլանավորում, նախագծի կազմում, հաստատում,
2) բյուջեի կատարում և վերահսկողություն,
3) բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում:

Դպրոցի բյուջեի նախագծի մշակման, բյուջեի հաստատման և կատարման հաշվետվությունների աշխատանքները կազմակերպելու նպատակով տնօրենը կազմում է դպրոցի բյուջետային օրացույց:

Բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստական փուլում տնօրենը՝ բյուջետային գործընթացին անհրաժեշտ ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների վերջնական արդյունքների արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ իրականացնում է՝

1. Բյուջեի նախագծի հանրային քննարկման կազմակերպումը՝ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու համար,
2. Բյուջեի նախագծի քննարկումը մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, կառավարման խորհրդի հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով,
3. Ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա բյուջեի նախագծի վերջնական տարբերակի մշակումը:
4. Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում տնօրենը, բյուջեի նախագիծը, ինչպես նաև դրա առնչությամբ ստացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացնում է խորհրդին:
5. Խորհուրդը, քննարկում է ներկայացված նախագիծը, առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը, և ընդունում է որոշում՝
   1) նախագծին հավանություն տալու կամ
   2) նախագիծը լրամշակման վերադարձնելու մասին՝ նշելով պատճառները և կատարման հստակ ժամկետներ:
6. Խորհուրդը, բյուջեի նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած քաղաքացիներին հրավիրում է բյուջեի պլանավորման համար հրավիրված նիստին՝ իրենց առաջարկների մասով քննարկումների և պարզաբանումներ ստանալու նպատակով:
7. Խորհուրդը, տնօրենի ներկայացմամբ քննարկում է նախագիծը և հավանության տալուց հետո ներկայացնում է լիազորված մարմնին:

8. Խորհուրդը բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով իրականացնում է վերահսկողություն՝ բյուջեի կազմման, քննարկման և կատարման գործընթացների նկատմամբ:
9. Տնօրենը բյուջեի կատարման վերաբերյալ խորհրդին ներկայացնում է հաշվետվություն՝ կիսամյակային և տարեկան, նաև այլ ժամկետներում՝ խորհրդի պահանջով:

Դպրոցի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը պարունակում է՝

1. Տեղեկություններ հաշվետու տարում դպրոցի բյուջեի մուտքերի և ելքերի վերաբերյալ, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև,
2. Տեղեկություններ հաշվետու տարում դպրոցի բյուջեի կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով,
3. Այլ տեղեկություններ, որոնք տնօրենն անհրաժեշտ է համարում դպրոցի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

Դպրոցի բյուջեի հրապարակայնությունն ապահովելու, բյուջեի մշակման, քննարկման, կատարման և վերահսկման աշխատանքներին համայնքի բնակչության, բոլոր շահագրգիռ կազմակերպություններին իրազեկելու և ներգրավելու նպատակով տնօրենը՝

1. Դպրոցի բյուջեի նախագիծը սահմանված ժամկետում հրապարակում է դպրոցի պաշտոնական կայքում, հաստատության հայտարարությունների համար նախատեսված անկյունում, կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվության միջոցներում՝ քաղաքացիներից, շահագրգիռ կազմակերպություններից 15-օրյա ժամկետում կարծիքներ, առաջարկներ ստանալու համար:
2. Բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո՝ աճողական կարգով, 15 օրվա ընթացքում հրապարակում է տեղեկատվություն դպրոցի բյուջեի և ծախսերի եռամսյակային կատարման մասին՝ դպրոցի պաշտոնական կայքում, հաստատության հայտարարությունների համար նախատեսված անկյունում, կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվամիջոցներում:
3. Դպրոցի բյուջեի և ծախսերի կատարման տարեկան հաշվետվությունը խորհրդի հավանությանն արժանանալուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է դպրոցի պաշտոնական կայքում, դպրոցի հայտարարությունների անկյունում, կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվամիջոցներում:

Ինչպես տեսնում ենք դպրոցի բյուջեի նախագծման, հաշվետվողականության և հանրայնացման գործառույթների անմիջական պատասխանատուն հանդիսանում է դպրոցի տնօրենը, իսկ բյուջեի հաստատման և ընթացիկ վերահսկողության աշխատանքները հիմնականում վերապահված են դպրոցի խորհրդին, իսկ ԾԽ-ը, ՄԽ-ը և ԱԽ-ը դպրոցի բյուջեի նախագծի մասին տեղեկանում են պոստ-ֆակտում և միայն մասնակցում են քննարկումներին:

Հետազոտության արդյունքները նույնպես վկայում են այն մասին, որ բյուջետային գործընթացին առավել շատ մասնակցություն ունեն (նվազման կարգով).

1. Դպրոցի խորհուրդը,
2. Ծնողական խորհուրդը,
3. Մանկավարժական խորհուրդը,
4. Աշակերտական խորհուրդը:

ՖԽ քննարկումներին մասնակցած թվով 600 մասնակիցների միայն 40%-ն է նշել, որ մասնակցում է դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներին: Ընդ որում այս մասնակիցների մեծամասնությունը ԴԽ անդամներ են: Հատկանշական է սակայն, որ ներկայումս բյուջեի պլանավորմանը որևէ մասնակցություն չունեցողների 56%-ը ցանկություն է հայտնել առաջիկայում մասնակցելու գործընթացին: Այլ կերպ ասած, հետազոտության մասնակիցների ընդամենը 30%-ն է, որ երբևէ չի մասնակցել և ցանկություն էլ չունի մասնակցելու դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներին: Սա բավականին մեծ ցուցանիշ է, որը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է աշխատանքներ տանել դպրոցի բյուջեի քննարկման, մշակման և վերահսկողության աշխատանքներում խորհրդակցական մարմինների անդամների ներգրավման ուղղությամբ: Այժմ անդրադառնանք բյուջեի մշակման գործընթացում դպրոցի կառավարման և խորհրդատվական մարմինների մասնակցությանը հետազոտության թիրախ համայնքներում:

Դպրոցի կառավարման և խորհրդատվական մարմինների մասնակցությունը բյուջեի մշակման աշխատանքներում

Բյուջեի հասանելիությունը և շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը

Հանրակրթական դպրոցների կայքէջում (http://schoolsite.am/) առկա թիրախ դպրոցների ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դիտարկված դպրոցների ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող հիմնական տեղեկատվությունը տեղադրված է համապատասխան կայքեջերում և հասանելի է հանրության համար: Մասնավորապես, համապատասխան (ֆինանսական) բաժնում տեղադրված է.

- Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը,
- Բյուջեի կատարման եռամսյակային և տարեկան հաշվետվությունները,
- Հաստիքացուցակները,
- Գնումների պլանը,
- Հաշիվ-ապրանքագրերը

Դպրոցների ֆինանսական գործունեության մասին տեղեկատվությունը որոշ դեպքերում նաև արտացոլված է ԴԽ և խորհրդատվական մարմինների նիստերի արձանագրություններում, ինչպես նաև որոշակի անդրադարձ է արվում դպրոցների ներքին գնահատման փաստաթղթերում:

Չնայած հանրակրթական դպրոցների կայքէջերի գործարկումը մեծապես նպաստել է դպրոցների ֆինանսական գործունեության հանրայնացմանը, այնուամենայնիվ հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ առկա են մի շարք բացեր, որոնք անհրաժեշտ է շտկել.

1. Դպրոցների բյուջեները և դրանց կատարողականները, ինչպես նաև հարակից ֆինանսական փաստաթղթերը հրապարակվում են տարբեր ձևաչափերով և ժամկետներում: Արդյունքում, օրինակ, դպրոցների մի մասում արդեն իսկ առկա է 2019թ-ի նախահաշիվը, մյուսներում ոչ, կամ դպրոցների մի մասի կայքերում ներկայացված են միայն տարեկան հաշվետվությունները, իսկ մյուսներում նաև եռամսյակայինները: Դպրոցի ֆինանսական գործունեությանն առնչվող տեղեկատվությունը անհրաժեշտ է հրապարակել ըստ այն ձևաչափի և ժամանակի, որոնք սահմանված են ՀՈՒՀ օրինակելի կանոնադրության մեջ[6]:
2. Դպրոցների ներքին գնահատման փաստաթղթերում նույնպես անդրադարձ է արվում դպրոցների ֆինանսական գործունեության արդյունավետությանը: Սակայն ոչ բոլոր

[6] ՀՈՒՀ կանոնադրություն, հոդված 66, կետ 1-3, IV (դպրոցի կառավարում)

դպրոցներն են տեղադրել այդ հաշվետվությունը: Իսկ որոշ դեպքերում տեղադրված է միայն 2016-2017 ուսումնական տարվա հաշվետվությունները միայն:

3. Դպրոցներում գնումների կազմակերպման մասին տեղեկատվությունը առկա է միայն սակավաթիվ կայքէջերում:
4. Ըստ առցանց հասանելի տեղեկատվության, դիտարկված 15 դպրոցներից միայն չորսում էր ներկայացված ԴԽ, ԾԽ, ԱԽ կամ ՄԽ նիստերի արձանագրություններ, այն էլ միայն մեկ կամ երկու նիստի արձանագրություն: Նիստերի արձանագրությունները պարունակում են կարոր տեղեկատվություն նիստի մասնակիցների, բացակաների, ֆինանսական և այլ հարցերի վերաբերյալ արտահայտած կարծիքների վերաբերյալ: Հետևապես այս փաստաթղթերը նույնպես անհրաժեշտ է հրապարակել: Մինչդեռ հետազոտության մասնակիցները նշում են, որ արձանագրություններն իրականացվում են ձեռագիր կերպով, հիմնականում են սկանավորվում և առցանց հասանելի չեն:

Հետազոտության մասնակիցները նաև անդրադարձել են նաև **դպրոցի ներսում տեսանելի վայրում դպրոցի բյուջեն փակցնելու անհրաժեշտությանը:** ՖԽ քննարկումներին մասնակցած ԴԽ անդամները հիմնականում նշում են, որ դպրոցի բյուջեն փակցվում է տեսանելի վայրում: Մինչդեռ ԱԽ անդամների կարծիքով այն փակցված չէ: Քննարկումների մասնակիցներից ոմանք էլ կարծում են, որ բյուջեն փակցված է, սակայն ոչ տեսանելի վայրում: Այսինքն այստեղ, որոշակի հակասություններ կան: Անհրաժեշտ է մշակել հստակ ներքին կանոնակարգ, թե դպրոցի ներսում որտեղ և ինչ պարբերականությամբ և ձևաչափով է անհրաժեշտ դպրոցի բյուջեին առնչվող տեղեկատվությունը փակցնել դպրոցի ներսում տեսանելի վայրում:

Ընդհանուր առմամբ, հետազոտության մասնակիցները նշում են, որ դպրոցի բյուջեի մշակման և կատարման աշխատանքներն իրականացվում են թափանցիկ կերպով: Այսինքն դպրոցի տնօրինությունը հիմնականում հանդիպումների, քննարկումների ձևաչափով տեղեկացնում է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության մասին: Այնուամենայնիվ ԱԽ և ԾԽ անդամները նշում են, որ կցանկանային առավել տեղեկացված լինել ֆինանսական գործունեության մասին, ընդ որում ցանկալի է որ նախապես տեղեկանան, որպեսզի կարողանան մասնակցություն ունենալ բյուջեի պլանավորման աշխատանքներում:

Հետազոտության արդյունքները վկայում են նաև այն մասին, որ բավականին ցածր է հետազոտության մասնակիցների **տեղեկացվածության մակարդակը** դպրոցի բյուջեի կառուցվածքի, համապատասխան տողերի նշանակության, բյուջեի մշակման և

վերահսկողության գործընթացում իրենց իրավասությունների մասին: Մասնավորապես, հետազոտության մասնակիցներին առաջարկվել է գնահատել, թե որքանով են տեղեկացված դպրոցի բյուջեի կառուցվածքի մասին 1-10 սանդղակով (որտեղ 1-ը բոլորովին տեղեկացված չեմ, 10-ը՝ լիովին տեղեկացված եմ): Հարցվածների միայն 27%-ն է 8-10 գնահատական տվել այս հարցին: Այստեղ կարող է հարց ծագել, ինչու է անգամ բյուջեի հասանելիության պարագայում այդքան քիչ թվով խորհրդատվական մարմինների անդամներ տեղյակ բյուջեի կառուցվածքից և ծախսերից: Պատասխանը պետք է փնտրենք կրկին անդրադառնալով հետազոտության արդյունքներին, ՖԽ քննարկումներից առանձնացված հատվածների տեսքով.

Աղյուսակ 3 Տեղեկացվածությունը դպրոցի բյուջեի կառուցվածքի մասին, հատվածներ ՖԽ քննարկումներից

Խորհրդակցական մարմիններ	Դատողություններ
Ծնողական խորհրդի անդամ	Դասագրքերի գների, ճաշարանի, տաք սնունդի ապահովման, անապահով երեխաներին աջակցության հետ կապված հարցեր ունենում և քննարկում ենք տնօրենի հետ: Ընդհանուր առմամբ բյուջեից տեղեկացված ենք: Բյուջեի սղության պատճառով մեր առաջարկների մի փոքր հատվածը կարող է կատարվել:
Մանկավարժական խորհրդի անդամ	Մանկավարժական խորհուրդը լիազորություններ չունի ֆինանսատնտեսական գործունեության մասով, չնայած տնօրենը ներկայացնում է բյուջեն, կարծիք հայտնում ենք: Բայց առանց այդ էլ մանկավարժների գործը շատ է, ինչ կարիք կա մասնակցենք նաև բյուջեի քննարկումներին:
Դպրոցական խորհրդի անդամ	Արդյոք իմաստ ունի խորությամբ ծանոթանալու բյուջեի կառուցվածքին կամ կարծիք հայտնելու, երբ բոլորս էլ գիտենք, որ գումարի մեծ մասը հատկացվում է աշխատավարձերին և կոմունալ վճարումներին: Հետևապես բյուջեյում որոշակի փոփոխություններ կատարելու մեր առաջարկները հիմնականում ապարդյուն են: Առանց լրացուցիչ ֆինանսավորման հնարավոր չէ ոչինչ անել:
Աշակերտական խորհրդի անդամ	Հիմնականում գիտենք, որ ծախսվում է աշխատավարձի և ջեռուցման վրա: Միայն կարող եմ ասել, որ ծանոթ ենք դպրոցի խնդիրներին, առաջարկում ենք, թե որ խնդիրներն է պետք առաջնահերթ լուծել: Եթե գումարը բյուջեում քիչ է պետք է ծրագիր մշակենք կոնկրետ, որ ֆինանսական աջակցություն ստանանք տարբեր կառույցներից:

Ընդհանրացնելով **Աղյուսակ 3**-ում ներկայացված կարծիքները կարող ենք ասել, որ առկա է դպրոցի բյուջեի մասին ցածր տեղեկատվության երկու հիմնական պատճառ.

- Դպրոցի բյուջեի սղության պատճառով, նոր առաջարկներ ներկայացնելը որոշ չափով իմաստազուրկ է, հետևապես կարիք չկա նաև խորությամբ ծանոթանալու:

- Ծանրաբեռնված աշխատանքի պարագայում կարիք չկա լրացուցիչ պարտականություն վերցնելու և մասնակցելու բյուջեի քննարկմանը:

Հետազոտության արդյունքների համաձայն Կապան համայնքի դպրոցների դպրոցական, ծնողական, մանկավարժական և աշակերտական խորհուրդների անդամները համեմատաբար ավելի տեղեկացված են դպրոցական տարեկան բյուջեի կառուցվածքից, քան Քաջարան և Մեղրի համայնքների ներկայացուցիչները.

Գծապատկեր 1 Որքանո՞վ է տեղեկացված Ձեր դպրոցի տարեկան բյուջեի կառուցվածքի մասին:



Ինչպես տեսնում ենք գծապատկերից ամենաքիչը տեղեկացված են Քաջարան համայնքի դպրոցներում:

Համանման պատկեր ենք տեսնում նաև բյուջեի թափանցիկության հետ կապված: Այսպես, Կապան համայնքում հետազոտության մասնակիցների 47%-ն է նշել, որ բյուջեի մշակման գործընթացն իրենց դպրոցում թափանցիկ է, Քաջարանում՝ 34%-ը, Մեղրիում՝ 31%-ը: Միևնույն ժամանակ, Քաջարանում հետազոտության մասնակիցների 39% նշել է, որ գործընթացը թափանցիկ չէ, իսկ Կապանում 30%-ը:

Գծապատկեր 2 Որքանո՞վ է թափանցիկ իրականացվում դպրոցի բյուջեի մշակման գործընթացը Ձեր դպրոցում:



Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ մասնակիցները տարբեր կերպ են ընկալում բյուջեի թափանցիկություն և հասանելիություն հասկացությունները: Եթե մի մասի համար թափանցիկությունը սահմանափակվում է միայն դպրոցի բյուջեի ֆիզիկական հասանելիությամբ և տեսանելի վայրում առկայությամբ, ապա մյուսները կարևորում են նաև անմիջական մասնակցությունը բյուջետային քննարկումներին և կարծիք արտահայտելու հնարավորությունը: Այսպիսով, կարող ենք եզրակացնել որ հետազոտության մասնակիցների համար բյուջեի թափանցիկության և բյուջեի մշակմանը մասնակցության երևույթները փոխկապված են: Բյուջեի թափանցիկության գործընթացը արդյունավետ կազմակերպման նպատակով հետազոտության մասնակիցներն առաջարկում են հետևյալ լուծումները.

- Դպրոցի տեսանելի վայրում փակցնել բյուջեն,
- Ապահովել ոչ միայն ԴԽ-ի այլև խորհրդատվական մյուս մարմինների (ԾԽ, ԱԽ, ՄԽ) ակտիվ մասնակցությունը բյուջեի քննարկումներին,
- Ապահովել կառավարման և խորհրդատվական մարմինների առավել ակտիվ համագործակցությունը դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության համատեքստում: Մասնավորապես, ԾԽ անդամների մեծ մասը նշում է, որ չնայած ԴԽ-ում ունեն ներկայացուցիչներ, վերջիններս իրենց չեն փոխանցում ԴԽ նիստերում ստացած՝ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող տեղեկատվությունը, և ԾԽ նիստերում հիմնականում քննարկում են ուսումնադաստիարակչական գործունեությանն առնչվող հարցեր:
- Կազմակերպել ֆինանսական գրագիտության դասընթացներ ԴԽ, ԾԽ, ԱԽ և ՄԽ անդամների համար, որպեսզի վերջիններս գիտակցեն դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության մեջ իրենց մասնակցության կարևորությունը, ինչպես նաև ստանան պրակտիկ գիտելիքներ բյուջեի կառուցվածքի, ֆինանսավորման այլընտրանքային հնարավորությունների և բյուջեի պլանավորման համատեքստում իրենց հիմնական գործառույթների մասին:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ դպրոցի բյուջեի թափանցիկության ապահովման, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերի տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, դպրոցի տնօրինությունը նախ և առաջ պետք է կարողանա շահագրգռել կառավարման և խորհրդատվական մարմինների բոլոր աշխատակիցներին առավել ակտիվ մասնակցություն ունենալ բյուջեի քննարկումներին: Ինչպես նաև անհրաժեշտ է մշակել հստակ կանոններ, թե ինչ պարբերականությամբ և ինչ ձևաչափով է պետք հանրայնացնել դպրոցի բյուջեին առնչվող տեղեկատվությունը: Դպրոցի բյուջեի ձևաչափը տվյալ դեպքում ենթադրում է տեղեկատվության մատչելիությունը: Հետազոտության մասնակիցները նշել են նաև, որ այն դժվար ընկալելի է, այսինքն պետք է տարբերակներ գտնել այն առավել մատչելի ներկայացնելու համար:

Այժմ անդրադառնանք դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների մասնակցությանը և հաշվետվողականության գործընթացների ապահովմանը:

Մասնակցությունը բյուջեի մշակման գործընթացներին և հաշվետվողականության ապահովում

Հետազոտության արդյունքների համաձայն, մասնակիցների միայն 40%-ն է նշել, որ մասնակցում է բյուջեի պլանավորման աշխատանքներին: Ընդ որում այսպես նշողների մեծամասնությունը դպրոցական կամ ծնողական խորհուրդների անդամներ են: Այլ կերպ ասած աշակերտական և մանկավարժական խորհուրդների անդամները որպես կանոն չեն մասնակցում բյուջեի հետ կապված աշխատանքներին, քննարկումներին, իսկ ծնողական խորհուրդների անդամները հիմնականում մասնակցում են միջնորդավորված եղանակով, քանի որ ունեն ներկայացուցիչներ ԴԽ-ում:

ԴԽ, ԾԽ, ՄԽ նիստերի առցանց հասանելի սակավաթիվ արձանագրություններում հիմնականում նշվում է այն փաստը, որ տեղի է ունեցել բյուջեի նախահաշվի, կատարողական հաշվետվության քննարկում: Սակայն որևէ տեղեկատվություն չկա այն մասին, թե արդյոք եղել են առաջարկություններ և առարկություններ հանդիպման մասնակիցների կողմից: Միայն նշվում է, որ ձայների մեծամասնությամբ այս կամ այն որոշումն ընդունվել է: Սա վկայում է այն մասին, որ խորհրդակցական մարմինները հիմնականում պասիվ մասնակցություն ունեն բյուջեի քննարկումներում և ֆինանսական գործընթացներում այդ մարմինների մասնակցությունը հիմնականում ձևական բնույթ է կրում: Անշուշտ դժվար է նմանատիպ եզրակացություն անել միայն սակավաթիվ արձանագրությունների հիման վրա: Սակայն այս մասին են վկայում նաև ՖԽ քննարկումների մասնակիցների կարծիքները, որոնք ներկայացված են ստորև.

Աղյուսակ 4 Մասնակցություն բյուջեի պլանավորման աշխատանքներում, կարծիքներ

Խորհրդակցական մարմիններ	Դատողություններ
Ծնողական խորհրդի անդամ	Դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներում չենք մասնակցում, սակայն ծախսերից տեղյակ ենք և վստահում ենք տնօրենին:
Մանկավարժական խորհրդի անդամ	Քննարկումներին չենք մասնակցում և կարիքը չենք տեսնում:
Դպրոցական խորհրդի անդամ	Նիստերը տեղի են ունենում եռամսյակը մեկ: Պարտադիր մասնակցում ենք նիստերին: Քննարկում ենք ֆինանսատնտեսական հարցերը և հավանություն տալիս բյուջեի կազմանը:
Աշակերտական խորհրդի	Բյուջեի քննարկման նախնական փուլում չենք մասնակցել հետո ենք

Խորհրդակցական մարմիններ	Դատողություններ
անդամ	տեղեկացել ծախսերի մասին:

Հետազոտության արդյունքների համաձայն, բյուջեի պլանավորման աշխատանքներին ամենաբարձր մասնակցությունը ցույց են տալիս Մեղրիի, այնուհետև, Կապանի դպրոցների ներկայացուցիչները: Ինչպես տեսնում ենք ստորև ներկայացված գծապատկերից Քաջարանի դպրոցների ներկայացուցիչները մյուս երկու համայնքների համեմատ ավելի պասիվ մասնակցություն են ցուցաբերում բյուջեի պլանավորման աշխատանքներում. հետազոտության մասնակիցների ընդամենը 29%-ն է նշել որ մասնակցում է:

Գծապատկեր 3 Մասնակցում եք արդյոք բյուջեի պլանավորման աշխատանքներին:



Ինչպես տեսնում ենք ընդհանուր առմամբ բյուջեի պլանավորման աշխատանքներին մասնակցությունը բավականին ցածր է: Սա այն դեպքում, երբ բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ ուսումնասիրված դպրոցների հաշվետվություններում հիմնականում նշվում է, որ սահմանված ժամկետներում կազմակերպվել է բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների, ՀՈՒՀ կառավարման խորհրդի հետ:

Ստորև ներկայացված գծապատկերից տեսնում ենք, որ բյուջեի պլանավորման աշխատանքներում ամենաբարձր մասնակցությունը ցուցաբերում են Կապանի թիվ 3 միջնակարգ (68%) և Կապանի թիվ 2 ավագ (65%) դպրոցներում, իսկ ամենացածր մասնակցությունը Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում (17%):

Գծապատկեր 4 Մասնակցում եք արդյոք բյուջեի պլանավորման աշխատանքներին, ըստ դպրոցների



Հետազոտության արդյունքների համաձայն դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներին մասնակցության հիմնական ձևը քննարկումներին մասնակցությունն է:

Գծապատկեր 5 Ինչպես եք մասնակցում բյուջեի պլանավորման աշխատանքներին



Հատկանշական է սակայն, որ հետազոտության մասնակիցների մի մասը, որոնք որևէ կերպ չեն մասնակցում բյուջեի պլանավորման աշխատանքներին, ցանկություն է հայտնել հետագայում մասնակցելու: Մասնավորապես 55%-ը նշել է, որ ցանկություն ունի մասնակցելու այդ աշխատանքներին, սակայն ներկայումս չի մասնակցում:

Հետազոտությանը մասնակցած դպրոցների ներքին գնահատման փաստաթղթերի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ բյուջեի պլանավորման և կատարման աշխատանքներում արդյունավետության որոշակի աճ նկատվում է վերջին տարիների ընթացքում: Այնուամենայնիվ գրեթե բոլոր ներքին գնահատման փաստաղթերում մենք տեսնում ենք, որ բյուջեի հիմնական մասը ծախսվում է աշխատավարձի և կոմունալ ծախսերի

վրա և շատ չնչին մասն է ծախսվում վերանորոգման, գույքի ձեռք բերման և այլ հիմնարար աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Հետազոտության մասնակիցները նաև անդրադարձել դպրոցում առկա այն խնդիրներին, որոնք ըստ իրենց առավել հրատապ լուծում են պահանջում: Ստորև ներկայացված են առավել հրատապ լուծում պահանջող խնդիրները և առաջարկները ըստ կառավարման և խորհրդակցական մարմինների և խնդիրների հրատապության աստիճանի նվազման:

Աղյուսակ 5 Առավել հրատապ լուծում պահանջող խնդիրները

Խորհրդակցական մարմիններ	Խնդիրներ, ըստ հրատապության նվազման
Ծնողական խորհրդի անդամ	1. Դպրոցի վերանարոգման աշխատանքներ. տանիքի վերանորոգում, պատուհաններ և այլն, 2. Սանհանգույցների վերանորոգում, 3. Անհրաժեշտ տեխնիկական միջոցների, դիդակտիկ նյութերի ձեռքբերում, 4. Մարզական գույքի ձեռքբերում 5. Մասնագիտական դասարանների, լաբորատորիաների կահավորում 6. Տաք սնունդի ապահովում
Մանկավարժական խորհրդի անդամ	1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կամզակերպման անհրաժեշտ պարագաներ, գրենական պիտույքներ 2. Դպրոցի, դասասենյակների կահավորում և վերանորոգում, 3. Ժամանակակից տեխնիկական միջոցներ. էլեկտրոնային գրատախտակ, պրոյեկտոր, համակարգիչներ և այլն 4. Մարզական գույք
Դպրոցական խորհրդի անդամ	1. Դպրոցի վերանարոգման աշխատանքներ. տանիքի վերանորոգում, պատուհաններ և այլն, 2. Մարզական գույքի ձեռքբերում, 3. Ժամանակակից տեխնոլոգիաներ. էլեկտրոնային գրատախտակ և այլն 4. Լաբորատորաների կահավորում 5. Տաք սննդի ապահովում
Աշակերտական խորհրդի անդամ	1. Մարզական գույքի ձեռքբերում, 2. Ժամանակակից տեխնոլոգիաներ. էլեկտրոնային գրատախտակ և այլն 3. Տաք սննդի ապահովում

Ինչպես տեսնում ենք **Աղյուսակ 5**-ից հետազոտության թիրախ հանդիսացող դպրոցներում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Դպրոցների կայքէջերում տեղակայված դպրոցների բյուջեների կատարողական հաշվետվությունների վերլուծությունը, սակայն վկայում է այն մասին, որ բյուջեների միայն 5-8%-ն է հատկացվում, վերը թվարկված ծախսերին, իսկ զգալի մասը հատկացվում է աշխատավարձերին և կոմունալ

վճարումներ: Հետևապես անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել արտաբյուջետային միջոցներ ներգրավելու ուղղությամբ: Մասնավորապես, տարածքի վարձակալության տրամադրում, վճարովի կրթական ծառայությունների մատուցում և օրենքով չարգելված այլ միջոցներ:

Հետազոտությանը մասնակցած ՔՀԿ-ներն այս կապակցությամբ իրենց լուծումն են առաջարկում: Նախ անհրաժեշտ է ֆինանսական գրագիտության և ձեռնարկատիրական հմտություններ փոխանցել թե՛ աշակերտներին, թե՛ ուսուցիչներին և թե՛ ծնողներին, որպեսզի վերջիններս իրենց արտադպրոցական գործունեությամբ կարողանան միջոցներ հայթայթել դպրոցի համար: Միևնույն ժամանակ ՔՀԿ-ները կարող են ավելի սերտորեն համագործակցել դպրոցների տնօրինության հետ, ապահովելով վերջիններիս կապը միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ լրացուցիչ ներդրումների ներգրավման և ծրագրերի իրականացման նպատակով: Ներկայումս ՔՀԿ-ները համագործակցում են դպրոցների հետ միայն իրենց կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև ծայրահեղ անհրաժեշտության դեպքում աջակցում են ֆինանսական միջոցներ հայթայթել դպրոցում առկա խնդիրները լուծելու նպատակով:

ՔՀԿ-ները նաև մատնանշում են ֆինանսական հաշվետվողականության կարևորության մասին: Այս մասին են վկայում նաև ՖԽ քննարկումների արդյունքները: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ում հանրակրթության պետական քաղաքականության սկզբունքների մեջ նշված է նաև «հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը»: Պատշաճ ժողովրդավարական կառավարման սկզբունքների թվում են հրապարակայնության ու թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները: Սկզբունքի էությունն այն է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու բոլոր տեսակի տեղեկություններին և որոշումների, քաղաքականության իրականացման և արդյունքների մասին տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հանրությանը այնպես, որ հնարավոր լինի դրան հետևել և աջակցել: Մյուս սկզբունքով ամրագրվում է որոշում կայացնողների պատասխանատվությունը իրենց ընդունած որոշումների հանդեպ, ինչպես նաև **դրանց զեկուցելու ու բացատրելու պարտադիր լինելը և դրանց բողոքարկելու հնարավորությունը:** Չնայած օրենքում տեղ գտած այս սկզբունքներին, դրանք չեն վերածվել համապատասխան մեխանիզմների, քանի որ դպրոցի կառավարման և խորհրդատվական մարմինները միայն պասիվ մասնակցություն են ունենում դպրոցի ֆինանսական հաշվետվությունների քննարկման ընթացքում, իսկ կարծիք հայտնելու դեպքում, այդ դիտարկումները հազվադեպ են տեղ գտնում դպրոցի բյուջեի կատարողականի բարելավման հետագա աշխատանքներում, քանի որ «դպրոցի ֆինանսական ռեսուրսները բավարար չեն համապատասխան աշխատանքներն իրականացնելու համար»:

Այսպիսով հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ չնայած դպրոցի բյուջեի թափանցիկության ապահովմանն ուղղված նկատելի քայլերի, որոնք իրականացվել են վերջին տարիների ընթացքում, բյուջեների հաշվետվողականության և ֆինանսատնտեսական գործընթացներում կառավարման և խորհրդակցական մարմինների մասնակցությունը բավարար չէ:

Եզրակացություններ

1. Դպրոցների բյուջեն գոյանում է գերազանցապես պետական բյուջեից ստացված գումարներից: Վարձակալությունից գոյացած եկամուտներ, լրացուցիչ կրթական ծառայություններ և նվիրատվություններ մարզային դպրոցները գրեթե չեն ստանում: Աննշան են նաև դպրոցի կողմից բյուջեից կամ այլ կազմակերպություններից ստացված դրամաշնորհային գումարները:
2. Հետազոտության թիրախային դպրոցների ծախսերի զգալի մասը կազմում են աշխատավարձը և կոմունալ ծախսերը: Չնչին մաս է կազմում մասնագիտական զարգացման դասընթացների, գույքի և սարքավորումների, նյութերի ձեռքբերման և ընթացիկ նորոգումների վրա կատարվող ծախսերը:
3. ՖԽ քննարկումներին մասնակցած թվով 600 մասնակիցների միայն 40%-ն է նշել, որ մասնակցում է դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներին: Ընդ որում այս մասնակիցների մեծամասնությունը ԴԽ անդամներ են: Հետազոտության մասնակիցների միայն 30%-ն է նշել, որ ցանկություն չունի մասնակցելու բյուջեի պլանավորման աշխատանքներին:
4. ԾԽ, ԱԽ և ՄԽ անդամները միայն մակերեսորեն են տեղեկացված դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունից: Ընդ որում այդ տեղեկատվությունը հիմնականում ստանում են միջնորդավորված եղանակով, դասղեկների, ԴԽ-ում ներկայացված ԾԽ անդամներից և այլն:
5. Դպրոցների բյուջեները և դրանց կատարողականները, ինչպես նաև հարակից ֆինանսական փաստաթղթերը հրապարակվում են տարբեր ձևաչափերով և ժամկետներում և ուսումնասիրված կայքէջերից մեծամասնության մոտ ամբողջական, համակարգված տեղեկատվությունը բացակայում է:
6. Դպրոցների ներքին գնահատման փաստաթղթերում նույնպես անդրադարձ է արվում դպրոցների ֆինանսական գործունեության արդյունավետությանը: Սակայն ոչ բոլոր դպրոցներն են տեղադրել այդ հաշվետվությունը: Իսկ որոշ դեպքերում տեղադրված է միայն 2016-2017 ուսումնական տարվա հաշվետվությունները միայն:
7. Դիտարկված 15 դպրոցներից միայն չորսում էր ներկայացված ԴԽ, ԾԽ, ԱԽ կամ ՄԽ նիստերի արձանագրություններ, այն էլ միայն մեկ կամ երկու նիստի արձանագրություն: Նիստերի արձանագրությունները պարունակում են կարոր տեղեկատվություն նիստի մասնակիցների, բացակաների, ֆինանսական և այլ հարցերի վերաբերյալ արտահայտած կարծիքների վերաբերյալ:

8. Չնայած դպրոցների բյուջեների մասին տեղեկատվությունը հիմնականում փակցված է դպրոցներում, դպրոցների մի մասում այն տեսանելի վայրում չի փակցված:
9. ԴԽ, ԾԽ, ՄԽ նիստերի առցանց հասանելի սակավաթիվ արձանագրություններում հիմնականում նշվում է այն փաստը, որ տեղի է ունեցել բյուջեի նախահաշվի, կատարողական հաշվետվության քննարկում: Սակայն որևէ տեղեկատվություն չկա այն մասին, թե արդյոք եղել են առաջարկություններ և առարկություններ հանդիպման մասնակիցների կողմից:
10. Դպրոցի կառավարման և ծնողական խորհուրդների միջև չկա համագործակցություն, հետադարձ կապ: Կառավարման խորհրդի անդամ ծնողներն ընտրվում են ծնողական խորհրդի կողմից, բայց հաշվետու չեն ծնողական խորհրդին: Ծնողների գրեթե կեսը դպրոցի գործունեությանը իրենց մասնակցությունը չի ընկալում որպես իրենց իրավունքների մաս:
11. Դպրոցների գերակշիռ մասում խորհուրդները ձևական բնույթ են կրում: Թեև խորհուրդներով կառավարման համակարգի նպատակն է դպրոցները ֆինանսատնտեսական առումով դարձնել ավելի ինքնուրույն, սակայն կառավարման և խորհրդակցական մարմինների ներկայացուցիչները հիմնականում պասիվ են և մասնակցությունը ապահովվում է միայն ներկայությամբ և միաձայն քվեարկությամբ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարող ենք նշել, որ ուսումնասիրված դպրոցներում առկա են բյուջեի հետ կապված հետևյալ հիմնախնդիրները.

1. Շահագրգիռ կողմերի մոտ բյուջեի մասին տեղեկացվածության ցածր մակարդակ,
2. Ֆինանսական ոչ բավարար ռեսուրսներ,
3. Բյուջեի պլանավորմանը շահագրգիռ կողմերի ցածր մասնակցություն,
4. Բյուջեի ոչ բավարար թափանցիկություն և տեսանելիություն:

Առաջարկություններ

1. Անհրաժեշտ է հետամուտ լինել, որպեսզի դպրոցները կատարեն ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի պահանջները՝ այն է, սեփական նախաձեռնությամբ որևէ եղանակով հրապարակեն իրենց գործունեության մասին 13 անուն տեղեկություն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ժամանակին և նախապես ապահովել դպրոցի բյուջեի նախագծի հանրայնացումը, որպեսզի բոլոր շահառուները կարողանան խորհրդատվական մարմինների աջակցությամբ իրենց դիտարկումները և առաջարկությունները ներկայացնել տնօրինությանը:
2. Դպրոցի ֆինանսական գործունեությանն առնչվող տեղեկատվությունը անհրաժեշտ է հրապարակել ըստ այն ձևաչափի և ժամանակի, որոնք սահմանված են ՀՈՒՀ օրինակելի կանոնադրության մեջ:
3. ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգում կատարել լրացում և հստակեցնել խորհրդի որոշումների արձանագրության պահանջները: Անհրաժեշտ է սահմանել խորհրդի որոշումների արձանագրությունների հրապարակման կարգը:
4. Ապահովել տնօրենի, կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցությունը՝ հատկապես ուժեղացնելով ծնողական խորհրդի ներգրավվածությունը ֆինանսական հարցերի մասին որոշումների կայացմանը: Անցկացնել կառավարման և ծնողական խորհրդի տարեկան առնվազն մեկ համատեղ նիստ՝ ֆինանսական հարցերի վերաբերյալ:
5. ՔՀԿ-ների և փորձագետների ջանքերով անհրաժեշտ է կամազկերպել ֆինանսական գրագիտության և ձեռնարկատիրական դասընթացներ դպրոցի տնօրինության, ԴԽ, ԾԽ, ՄԽ և ԱԽ անդամների համար: Անհրաժեշտ է ուժեղացնել տնօրենների և կառավարման խորհրդի անդամների կարողությունների զարգացումը արտաբյուջետային ֆինանսական միջոցների ներգրավման առումով: Իրականացնել մասնագիտական զարգացման ծրագրեր, խրախուսել այն դպրոցներին, որոնք իրականացնում են լրացուցիչ կրթական ծառայություններ, ֆինանսական ռեսուրսներ բերելով դպրոցին:
6. Ներդնել դպրոցների մակարդակով ծախսերի համակարգված տեղեկատվական բազա, ինչը կնպաստի ռեսուրսների ծախսերի օպտիմալացմանը և դրանց թափանցիկությանը: Դա տեսանելի կդարձնի տարբեր համայնքների ցուցանիշները, ինչպես նաև գնահատել ծախսերի նվազման և աճի դինամիկան կոնկրետ դպրոցի մակարդակում:
7. Անհրաժեշտ է հրապարակել դպրոցի կառավարման և խորհրդատվական մարմինների նիստերի արձանագրությունները, որպեսզի բոլորի համար տեսանելի լինի, թե որքանով են

այդ մարմինները մասնակցում դպրոցի բյուջեների պլանավորման աշխատանքներում: Ներկայումս այդ արձանագրությունների մեծամասնությունը պահվում է ձեռագիր տարբերակով միայն և առցանց հասանելի չէ:

8. Դպրոցի բյուջեն անհրաժեշտ է փակցնել տեսանելի վայրում:
9. Ապահովել կառավարման և խորհրդատվական մարմինների առավել ակտիվ համագործակցությունը դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության համատեքստում: Հետազոտության մասնակիցներն առաջարկում են բյուջեի քննարկումը դարձնել օրակարգային հարց ԱԽ և ԾԽ քննարկումների ժամանակ: Որի ընթացքում մշակված առաջարկները կներկայացվեն տնօրենին և դպրոցի կառավարման խորհրդին:
10. Դպրոցի բյուջեի մասին առավել ամբողջական և մատչելի պատկերացում կազմելու համար աշակերտներիի, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի համար անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ: Օրինակ՝ թե ինչ է բյուջեն, ինչ հոդվածներից է բաղկացած, ինչպիսի մասնակցություն կարող են ունենալ շահագրգիռ կողմերը բյուջեի պլանավորման և ծախսերի վերահսկողության աշխատանքներում:
11. Բյուջեի հրապարակայնությունն ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնել, թե որտեղ և երբ կարող են ծանոթանալ բյուջեին: Միևնույն դպրոցի տնօրինությունը պետք է հետևողական լինի դպրոցի կայքէջի թարմացման հարցում և անհրաժեշտ տեղեկատվությունը ժամանակին տեղադրելու հարցում:
12. Բյուջեի ծախսարդյունավետությունն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է շահագրգիռ կողմերի մասնակցության միջոցով պարզել, դպրոցում առկա բոլոր խնդիրները, այնուհետև դասակարգել ըստ առաջնահերթության և տարեկան բյուջեն պլանավորել ըստ նշված առաջնահերթության: Միևնույն ժամանակ պետք է վերահսկողություն սահմանել թե ինչպես են ծախսվում բյուջեով նախատեսված գումարները: Այստեղ մեծ դերակատարում կարող են ունենալ, թե՛ ԴԽ-ն, թե՛ խորհրդատվական մյուս մարմինները:
13. Այլընտրանքային ռեսուրսների ներգրավման նպատակով անհրաժեշտ է կիրառել համակարգային մոտեցում: Նախ պետք է ԴԽ, ՄԽ, ԾԽ և ԱԽ անդամների մոտ զարգացնել ծրագիր կազմելու, բիզնես նախագիծ կազմելու և տարբեր միջազգային և տեղական կազմակերպություններին ֆինանսավորում ստանալու նպատակով դիմելու հմտություններ: Այստեղ կարող է օգտակար լինել համայնքում գործող ՔՀԿ-ների և փորձագետների փորձը և գիտելիքները: Այլ կերպ ասած յուրաքանչյուր դպրոցում պետք է ստեղծել որոշակի գիտելքիներ և հմտություններ ունեցող օղակներ՝ «ծրագրային թիմեր», որոնք կկարողանան մշակել ծրագիր և դիմել տարբեր կազմակերպությունների ֆինանսավորում ստանալու և ծրագիր իրականացնելու նպատակով:
14. Անհրաժեշտ է նաև որոշակի փոփոխություններ անել օրենսդրական մակարդակում, որպեսզի դպրոցները հարկային որշակի արտոնություններ ունենան և ձեռնարկատիրական

գործունեությունից ստացված շահույթն օգտագործեն միայն դպրոցի կարիքները հոգալու համար:

15. Հետազոտության մասնակիցները նաև անդրադարձան նաև այն խնդրին, որ դպրոցի խնայված միջոցները ստիպված են վերադարձնել մարզպետարան: Անհրաժեշտ է արդյունավետ պլանավորել միջոցների ծախսումը ուսումնական տարվա ընթացքում, որպեսզի այդ միջոցներն ուղղվեն միայն դպրոցի կարիքներին:

Հավելվածներ

Հավելված 1. Ուսումնասիրված իրավական ակտերը

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,
- «Կրթության մասին» ՀՀ օրենք,
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք,
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,
- «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն,
- ՀՀ կառավարության 24"08"2006թ. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու մասին» թիվ 1262-Ն որոշում,
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգը հաստատելու մասին» թիվ 205 Ա/Ք հրաման,
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 18"03"2010թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 113-Ն հրաման:

Հավելված 2. Հետազոտության գործիքներ

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Բարև Ձեզ, «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ն իրականացնում է ֆոկուս խմբային քննարկումներ և հարցումներ Կապան, Քաջարան և Մեղրի համայնքների դպրոցներում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ստանալու նպատակով: Քննարկման ընթացքում ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը: Խնդրում ենք լինել անկեղծ: Քննարկման արդյունքները վերլուծվելու են ընդհանրական տեսքով և մասնակիցների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

- Շնորհակալություն հայտնեք ժամանակի և պատրաստակամության համար՝ մասնակցելու այս հետազոտությանը:
- Ծանոթացրեք Ձեզ և կազմակերպությունը, որը ներկայացնում եք:
- Բացատրեք հետազոտության հիմնանպատակները:
- Հավաստիացրեք, որ բոլոր պատասխանները կպահվեն ԽԻՍՏ կոնֆիդենցիալ և որ ստացված տեղեկությունը կօգտագործվի միայն հետազոտական նպատակներով:
- Բացատրեք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ, այլ կան միայն անհատական կարծիքներ:
- Նշեք, որ բոլոր նոթագրումներն ու ձայնագրումները հետապնդում են զուտ մի նպատակ, այն է՝ չկորցնել և չմոռանալ հնչող տեղեկությունը:
- Ներկայացրեք քննարկման հիմնական կանոնները.

1. Արգելվում է ընդհատել խոսողին (երբ մեկը խոսում է մյուսները պետք է լռեն),
2. Եթե որևէ հարցում համաձայն չեք զրուցակցի հետ, պետք է ոչ միայն առարկել, այլև հակափաստարկ բերել:

Հարցեր

1. Եկեք խոսենք դպրոցական խորհուրդում Ձեր հիմնական լիազորությունների և խորհուրդի ընդհանուր գործունեության մասին: Որքա՞ն հաճախ են գումարվում խորհուրդի նիստերը: Ի՞նչ գործունություն է ծավալում դպրոցական խորհուրդը: Իսկ ի՞նչ մասնակցություն եք Դուք ունենում դպրոցական խորհուրդի աշխատանքներում:
2. Ձեր գնահատմամբ որքանո՞վ է արդյունավետ գործում դպրոցական խորհուրդը: Ինչո՞ւ եք կարծում, որ արդյունավետ է գործում: Իսկ ինչո՞ւ արդյունավետ չէ:
3. Ներկայումս Ձեր դպրոցում ի՞նչ խնդիրներ կան, որ հրատապ լուծում են պահանջում: Արդյոք քննարկում եք այդ խնդիրները խորհուրդի հանդիպումների ժամանակ: Ինչպիսի՞

ընթացք եք տալիս: Ինչպե՞ս եք որոշում այս կամ այն խնդրի հրատապությունը և ինչին պետք է առավել ուշադրություն դարձնել: Ո՞վ է կայացնում վերջնական որոշումը: Ինչու:

4. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի համաձայն, դպրոցական խորհուրդը ունի որոշակի լիազորություններ, որոնք վերաբերում են նաև ուսումնական հաստատության ամենամյա ծախսերին և բյուջեին: Տեղյակ եք արդյոք այդ լիազորությունների մասին: Հիմնականում ինչպիսի աշխատանքներ եք իրականացնում այս ուղղությամբ:
5. Թվարկված միջոցառումներից որո՞նք եք իրականացրել խորհուրդի շրջանակներում ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում.
   - ամենամյա ծախսերի նախահաշվի քննարկում,
   - հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտի քննարկում և ներկայացնում հաստատման,
   - դպրոցի ուսումնադաստիարակչական հաշվետվության քննարկում,
   - դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության քննարկում:

   Ձեր քննարկումների ընթացքում եղել են արդյոք առարկություններ կամ առաջարկություններ վերը թվարկված կետերից որևէ մեկի հետ կապված, մասնակիցների մոտ: Եթե այո, ապա ի՞նչ հարցերի շուրջ: Ինչպիսի՞ ընթացք է տրվել այդ առաջարկություններին: Ինչպե՞ս եք հանգել վերջնական եզրակացության:
6. Հայաստանում իրականացված հետազոտություններից մեկի համաձայն դպրոցական խորհուրդները դեռևս երկու տարի առաջ էական ազդեցություն չունեին դպրոցների հետ կապված որոշումների իրականացման հարցում և վերջնական որոշումը կայացնում էր հիմնականում տնօրենը կամ մարզպետարանը: Ինչպե՞ս է այժմ իրավիճակը Ձեր դպրոցում: Կարող եք նկարագրել, թե ինչպես է կատարվում որոշումները դպրոցի ֆինանսատնտեսական ոլորտին առնչվող փաստաթղթերի քննարկման օրինակով: Լինում են արդյոք առարկություններ, առաջարկություններ, դիտողություններ: Եթե այո, ապա արդյոք արձանագրվում են այդ առաջարկությունները: Եթե ոչ, ապա ըստ Ձեզ, ինչո՞ւ չեն լինում:
7. Արդյոք ընթացիկ տարվա ընթացքում դպրոցի տնօրենը Ձեզ ներկայացրել է կիսամյակային (տարեկան) հաշվետվություն բյուջեի կատարման (մուտքեր և ելքեր, դրանց համեմատական վերլուծություն, բյուջեի կատարված ուղղությունները և այլն) վերաբերյալ: Ինչ հարցեր եք քննարկել այդ հանդիպման ընթացքում: Արդյոք եղել են մտահոգող կամ պարզաբանման ենթակա հարցեր քննարկման ընթացքում: Ներկայացվել են արդյոք այդ հարցերը տնօրենին: Ինչպիսի ընթացք են ստացել այդ հարցերը:
8. Սովորաբար ինչպես են արձանագրվում խորհուրդի նիստերը, մատյաններում, թե համակարգչային տարբերակով:
9. Ըստ Ձեզ, որքանով է թափանցիկ իրականացվում դպրոցի բյուջեի մշակման գործընթացը Ձեր դպրոցում: Արդյոք Ձեր դպրոցի բյուջեն հրապարակվում է: Եթե այո, ապա ինչ տարբերակով: Եթե ոչ ապա, ինչու: Արդյոք բյուջեի նախագիծը հասանելի է

շահագրգիռ կողմերի և հանրության համար: Իսկ բյուջեի կատարողականը: Եթե ոչ ապա ինչն է պատճառը:

10. Ներկայումս կա արդյոք դպրոցական խորհուրդը և ծնողական խորհուրդների միջև: Եթե այո, նկարագրեք խնդրեմ այդ համագործակցությունը: Արդյոք դպրոցի կառավարման խորհուրդի անդամ հանդիսացող ծնողները հաշվետու են ծնողական խորհուրդներին: Արդյոք կառավարման խորհուրդի շրջանակներում քննարկված դպրոցի ֆինանսական գործունեությանն առնչվող հարցերը հասանելի են ծնողական խորհուրդներին:
11. Ինչ առաջարկություններ ունեք դպրոցի կառավարման խորհուրդի գործունեության բարելավմանն ուղղված: Իսկ ինչ առաջարկություններ ունեք դպրոցի ֆինանսատնտեսական գործունության բարելավմանն ուղղված: Ինչ քայլեր է անհրաժեշտ նախաձեռնել բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու համար:
12. Հայտնի է, որ դպրոցի բյուջեի զգալի մասը հատկացվում է մանկավարժների աշխատավարձներին և շատ փոքր մասն է հատկացվում մյուս անհրաժեշտ ծախսերին: Ինչպե՞ս եք պատկերացնում այս խնդրի լուծումը: Ինչ լրացուցիչ քայլեր եք ձեռնարկում դպրոցի բյուջեն ավելացնելու ուղղությամբ (օրինակ տարածքի վարձակալություն և այլն): Ինչպե՞ս եք վարվում, երբ բյուջեով չնախատեսված հրատապ ծախսեր են առաջանում: Ինչպես եք լուծում խնդիրը:
13. ***[Հարցն ուղղել բոլոր մասնակիցներին, բացի տնօրենից]*** Պատկերացրեք, որ Դուք հանդիսանում եք Տնօրեն և ունեք սահմանափակ գումար դպրոցի համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար: Ի՞նչ նպատակներով կօգտագործեք այդ գումարն առաջին հերթին: Իսկ ինչ կանեիք, որպեսզի դպրոցի բյուջեի և ծախսերի մասին տեղյակ լինեն բոլոր շահագրգիռ կողմերը: Ի՞նչ պետք է անել, որպեսզի թե՛ ծնողական, թե մանկավարժական, թե աշակերտական խորհուրդները ակտիվ մասնակցություն ունենան դպրոցի բյուջեի պլանավորման և ծախսերի վերահսկողության գործընթացներում:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Բարև Ձեզ, «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ն իրականացնում է ֆոկուս խմբային քննարկումներ և հարցումներ Կապան, Քաջարան և Մեղրի համայնքների դպրոցներում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ստանալու նպատակով: Քննարկման ընթացքում ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը: Խնդրում ենք լինել անկեղծ: Քննարկման արդյունքները վերլուծվելու են ընդհանրական տեսքով և մասնակիցների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

- Շնորհակալություն հայտնեք ժամանակի և պատրաստակամության համար՝ մասնակցելու այս հետազոտությանը:
- Ծանոթացրեք Ձեզ և կազմակերպությունը, որը ներկայացնում եք:
- Բացատրեք հետազոտության հիմնանպատակները:
- Հավաստիացրեք, որ բոլոր պատասխանները կպահվեն ԽԻՍ կոնֆիդենցիալ և որ ստացված տեղեկությունը կօգտագործվի միայն հետազոտական նպատակներով:
- Բացատրեք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ, այլ կան միայն անհատական կարծիքներ:
- Նշեք, որ բոլոր նոթագրումներն ու ձայնագրումները հետապնդում են զուտ մի նպատակ, այն է՝ չկորցնել և չմոռանալ հնչող տեղեկությունը:
- Ներկայացրեք քննարկման հիմնական կանոնները.

1. Արգելվում է ընդհատել խոսողին (երբ մեկը խոսում է մյուսները պետք է լռեն),
2. Եթե որևէ հարցում համաձայն չեք զրուցակցի հետ, պետք է ոչ միայն առարկել, այլև հակափաստարկ բերել:

Հարցեր

3. Եկեք խոսենք ծնողական խորհուրդում Ձեր հիմնական լիազորությունների և խորհուրդի ընդհանուր գործունեության մասին: Որքան հաճախ են գումարվում ծնողական խորհուրդի նիստերը: Ինչ գործունություն է ծավալում ծնողական խորհուրդը; Ինչ հարցեր եք քննարկում: Երբևէ մասնակցել եք հետևյալ գործողությունների իրականացմանը.
    - դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհուրդի քննարկմանը ներկայացրել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:

- լսում եք տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները,
- ներգրավում եք ծնողներին սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում,
- մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների,
- ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում,
- մասնակցում եք դպրոցի ֆինանսական գործընթացներին:

14. Ունեք արդյոք ծնողական խորհուրդի անդամներ դպրոցի կառավարման խորհուրդում: Տեղյակ եք արդյոք, թե ինչպիսի պարտականություններ են նրանք իրականացնում:
15. Ներկայումս մասնակցում եք արդյոք դպրոցի վճարովի ծառայությունների մատուցման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին: Եթե ոչ, ապա Ձեր կարծիքով պետք է արդյոք ծնողները մասնակցեն թվարկված աշխատանքներին: Ինչու եք այդպես կարծում:
16. Ինչ մասնակցություն կարող են ունենալ ծնողները դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներում: Ինչպես եք պատկերացնում այդ գործընթացը: Երբևէ ունեցել եք առաջարկություններ դպրոցի բյուջեի պլանավորման հետ կապված: Ներկայացրել եք արդյոք այդ առաջարկությունները դպրոցի տնօրինությանը: Ինչպիսի արձագանք եք ստացել:
17. Որքանով եք տեղեկացված Ձեր դպրոցի ֆինանսական գործունեության վերաբերյալ: Ծանոթ եք արդյոք Ձեր դպրոցի բյուջեի բովանդակությանը: Եթե այո, ապա ինչպես եք ծանոթացել, եթե ոչ ապա ինչ կցանկանայիք իմանալ: Երբևէ փորձել եք ծանոթանալ բյուջեի բովանդակությանը: Ինչ քայլեր եք ձեռնարկել ծանոթանալու համար: Ինչ արձագանք եք ստացել: Որոնք են դպրոցի ֆինանսական վիճակի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրները (ծնողական խորհուրդ, դպրոցի տեսանելի վայրում փակցված է, այլ ծնողներ, դպրոցի մարզպետարանի կայք, ներկայացրել է տնօրենը և այլն):
18. Այժմ եկեք խոսենք ծնողների կողմից կատարվող ծախսերի մասին: Ուսումնական գործընթացի հետ ինչպիսի ծախսեր եք հիմնականում կատարում: Որքանով են ըստ Ձեզ նպատակահարմար այդ ծախսերը: Ինչու եք այդպես կարծում: Իսկ ինչպիսի ծախսեր եք անում արտադասարանային պարապմունքների համար: Որքանով են ըստ Ձեզ նպատակահարմար այդ ծախսերը: Իրականացնում եք արդյոք ոչ ֆորմալ ծախսեր նվերներ ձեռք բերելու և այլ նպատակներով:
19. Ըստ Ձեզ, որքանով է արդյունավետ ծախսվում դպրոցի բյուջեն: Տեղյակ եք արդյոք, թե ընացիկ ինչ ծախսեր է իրականացվում դպրոցի բյուջեից: Իսկ ինչ ծախսեր է ներկայումս անհրաժեշտ իրականացնել, դպրոցի որ խնդիրների լուծման համար է ըստ Ձեզ անհրաժեշտ հրատապ ծախսեր իրականացնել: Իսկ նախատեսվում է արդյոք իրականացնել այդ ծախսերը:

20. Դպրոցի տարեկան բյուջեի պլանավորման նոր կարգի համաձայն այն պետք է բյուջեի նախագծի նոր տարբերակը պետք է քննարկվի նաև ծնողական խորհուրդների հետ: Արդյոք դպրոցի տնօրենը, կամ ծնողական խորհուրդի այն անդամները, որոնք ներգրավված են դպրոցի կառավարման խորհուրդում Ձեզ ներկայացնում են դպրոցի բյուջեն և կարծիք հարցնում: Եթե այո, ապա ինչ հաճախությամբ են քննարկում: Ինչ ձևաչափով են իրականացվում դպրոցի բյուջեի ներկայացումը: Արդյոք Դուք ներկայացնում եք Ձեր առաջարկությունները այդ քննարկումների ժամանակ: Եթե այո, ապա ինչ առաջարկություններ եք ներկայացնում:
21. Պատկերացրեք, որ Դուք հանդիսանում եք Տնօրեն և/ կամ դպրոցական խորհուրդի անդամ և ունեք սահմանափակ գումար դպրոցի համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար: Ի՞նչ նպատակներով կօգտագործեք այդ գումարն առաջին հերթին: Իսկ ի՞նչ կանեիք, որպեսզի դպրոցի բյուջեի և ծախսերի մասին տեղյակ լինեն բոլոր շահագրգիռ կողմերը: Ի՞նչ պետք է անել, որպեսզի թե՛ ծնողական, թե մանկավարժական, թե աշակերտական խորհուրդները ակտիվ մասնակցություն ունենան դպրոցի բյուջեի պլանավորման և ծախսերի վերահսկողության գործընթացներում:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Բարև Ձեզ, «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ն իրականացնում է ֆոկուս խմբային քննարկումներ և հարցումներ Կապան, Քաջարան և Մեղրի համայնքների դպրոցներում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ստանալու նպատակով: Քննարկման ընթացքում ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը: Խնդրում ենք լինել անկեղծ: Քննարկման արդյունքները վերլուծվելու են ընդհանրական տեսքով և մասնակիցների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

- Շնորհակալություն հայտնեք ժամանակի և պատրաստակամության համար՝ մասնակցելու այս հետազոտությանը:
- Ծանոթացրեք Ձեզ և կազմակերպությունը, որը ներկայացնում եք:
- Բացատրեք հետազոտության հիմնանպատակները:
- Հավաստիացրեք, որ բոլոր պատասխանները կպահվեն ԽԻՍ կոնֆիդենցիալ և որ ստացված տեղեկությունը կօգտագործվի միայն հետազոտական նպատակներով:
- Բացատրեք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ, այլ կան միայն անհատական կարծիքներ:
- Նշեք, որ բոլոր նոթագրումներն ու ձայնագրումները հետապնդում են զուտ մի նպատակ, այն է՝ չկորցնել և չմոռանալ հնչող տեղեկությունը:
- Ներկայացրեք քննարկման հիմնական կանոնները.

1. Արգելվում է ընդհատել խոսողին (երբ մեկը խոսում է մյուսները պետք է լռեն),
2. Եթե որևէ հարցում համաձայն չեք զրուցակցի հետ, պետք է ոչ միայն առարկել, այլև հակափաստարկ բերել:

Հարցեր

3. Եկեք խոսենք մանկավարժական խորհուրդում Ձեր հիմնական լիազորությունների և խորհուրդի ընդհանուր գործունեության մասին: Որքան հաճախ են գումարվում խորհուրդի նիստերը: Ինչ գործունություն է ծավալում մանկավարժական խորհուրդը: Իսկ ինչ մասնակցություն եք Դուք ունենում մանկավարժական խորհուրդի աշխատանքներում: Որքան հաճախ են գումարվում մանկավարժական խորհուրդի նիստերը:
4. Ներկայումս Ձեր դպրոցում ինչ խնդիրներ կան, որ հրատապ լուծում են պահանջում: Արդյոք քննարկում եք այդ խնդիրները խորհուրդի հանդիպումների ժամանակ: Ինչպիսի

ընթացք եք տալիս: Ինչպես եք որոշում այս կամ այն խնդրի հրատապությունը և ինչին պետք է առավել ուշադրություն դարձնել: Ով է կայացնում վերջնական որոշումը: Ինչու:

5. Արդյոք մանկավարժական խորհուրդը ունի որոշակի լիազորություններ դպրոցի ֆինանսատնտեսական գործունության հետ կապված: Եթե այո, ապա ինչպիսի լիազորություններ: Եթե ոչ, ապա ըստ Ձեզ ինչպես կարող է մասնակցել մանկավարժական խորհուրդը դպրոցի ֆինանսատնտեսական գործունության մեջ:
6. Արդյոք ընթացիկ տարվա ընթացքում դպրոցի տնօրենը Ձեզ ներկայացրել է կիսամյակային (տարեկան) հաշվետվություն բյուջեի կատարման (մուտքեր և ելքեր, դրանց համեմատական վերլուծություն, բյուջեի կատարված ուղղությունները և այլն) վերաբերյալ: Եթե այո, ապա ինչ հարցեր եք քննարկել այդ հանդիպման ընթացքում: Արդյոք եղել են մտահոգող կամ պարզաբանման ենթակա հարցեր քննարկման ընթացքում: Ներկայացվել են արդյոք այդ հարցերը տնօրենին: Ինչպիսի ընթացք են ստացել այդ հարցերը:
7. Ինչ մասնակցություն կարող են ունենալ մանկավարժները դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներում: Ինչպես եք պատկերացնում այդ գործընթացը: Երբևէ ունեցել եք առաջարկություններ դպրոցի բյուջեի պլանավորման հետ կապված: Ներկայացրել եք արդյոք այդ առաջարկությունները դպրոցի տնօրինությանը: Ինչպիսի արձագանք եք ստացել:
8. Որքանով եք տեղեկացված Ձեր դպրոցի ֆինանսական գործունեության վերաբերյալ: Ծանոթ եք արդյոք Ձեր դպրոցի բյուջեի բովանդակությանը: Եթե այո, ապա ինչպես եք ծանոթացել, եթե ոչ ապա ինչ կցանկանայիք իմանալ: Երբևէ փորձել եք ծանոթանալ բյուջեի բովանդակությանը: Ինչ քայլեր եք ձեռնարկել ծանոթանալու համար: Ինչ արձագանք եք ստացել: Որոնք են դպրոցի ֆինանսական վիճակի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրները:
9. Ըստ Ձեզ, որքանով է թափանցիկ իրականացվում դպրոցի բյուջեի մշակման գործընթացը Ձեր դպրոցում: Արդյոք Ձեր դպրոցի բյուջեն հրապարակվում է: Եթե այո, ապա ինչ տարբերակով: Եթե ոչ ապա, ինչու: Արդյոք բյուջեի նախագիծը հասանելի է շահագրգիռ կողմերի և հանրության համար: Իսկ բյուջեի կատարողականը: Եթե ոչ ապա ինչն է պատճառը:
10. Այժմ եկեք խոսենք մանկավարժների կողմից ուսումնական նպատակներով կատարվող ծախսերի մասին: Ուսումնական գործընթացի հետ ինչպիսի ծախսեր եք հիմնականում կատարում: Որքանով են ըստ Ձեզ նպատակահարմար այդ ծախսերը: Ինչու եք այդպես կարծում:
11. Ներկայումս կա արդյոք կապ մանկավարժական խորհուրդի և դպրոցական խորհուրդների միջև: Եթե այո, նկարագրեք խնդրեմ այդ համագործակցությունը: Արդյոք

դպրոցի կառավարման խորհուրդի անդամ հանդիսացող մանկավարժները հաշվետու են մանկավարժական խորհուրդին: Արդյոք կառավարման խորհուրդի շրջանակներում քննարկված դպրոցի ֆինանսական գործունեությանն առնչվող հարցերը հասանելի են մանկավարժական խորհուրդին:

12. Ի՞նչ առաջարկություններ ունեք մանկավարժական խորհուրդի գործունեության բարելավմանն ուղղված:
13. Պատկերացրեք, որ Դուք հանդիսանում եք Տնօրեն և/ կամ դպրոցական խորհուրդի անդամ և ունեք սահմանափակ գումար դպրոցի համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար: Ի՞նչ նպատակներով կօգտագործեք այդ գումարն առաջին հերթին: Իսկ ինչ կանեիք, որպեսզի դպրոցի բյուջեի և ծախսերի մասին տեղյակ լինեն բոլոր շահագրգիռ կողմերը: Ի՞նչ պետք է անել, որպեսզի թե՛ ծնողական, թե մանկավարժական, թե աշակերտական խորհուրդները ակտիվ մասնակցություն ունենան դպրոցի բյուջեի պլանավորման և ծախսերի վերահսկողության գործընթացներում:

ՖՈԿՈՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Բարև Ձեզ, «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ն իրականացնում է ֆոկուս խմբային քննարկումներ և հարցումներ Կապան, Քաջարան և Մեղրի համայնքների դպրոցներում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ստանալու նպատակով: Քննարկման ընթացքում ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը: Խնդրում ենք լինել անկեղծ: Քննարկման արդյունքները վերլուծվելու են ընդհանրական տեսքով և մասնակիցների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

- Շնորհակալություն հայտնեք ժամանակի և պատրաստակամության համար՝ մասնակցելու այս հետազոտությանը:
- Ծանոթացրեք Ձեզ և կազմակերպությունը, որը ներկայացնում եք:
- Բացատրեք հետազոտության հիմնանպատակները:
- Հավաստիացրեք, որ բոլոր պատասխանները կպահվեն ԽԻՍ կոնֆիդենցիալ և որ ստացված տեղեկությունը կօգտագործվի միայն հետազոտական նպատակներով:
- Բացատրեք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ, այլ կան միայն անհատական կարծիքներ:
- Նշեք, որ բոլոր նոթագրումներն ու ձայնագրումները հետապնդում են զուտ մի նպատակ, այն է՝ չկորցնել և չմոռանալ հնչող տեղեկությունը:
- Ներկայացրեք քննարկման հիմնական կանոնները.

1. Արգելվում է ընդհատել խոսողին (երբ մեկը խոսում է մյուսները պետք է լռեն),
2. Եթե որևէ հարցում համաձայն չեք զրուցակցի հետ, պետք է ոչ միայն առարկել, այլև հակափաստարկ բերել:

Հարցեր

3. Եկեք խոսենք աշակերտական խորհուրդում գործունեության մասին: Որքա՞ն հաճախ եք հանդիպում: Հիմնականում ի՞նչ հարցեր եք քննարկում: Մի փոքր պատմեք ընթացքի մասին:
4. Ներկայումս Ձեր դպրոցում ի՞նչ խնդիրներ կան, որ հրատապ լուծում են պահանջում: Արդյոք քննարկում եք այդ խնդիրները խորհուրդի հանդիպումների ժամանակ: Ինչպիսի՞ ընթացք եք տալիս: Ինչպե՞ս եք որոշում այս կամ այն խնդրի հրատապությունը և ինչի՞ն պետք է առավել ուշադրություն դարձնել: Ինչպե՞ս է կատարվում վերջնական որոշումը:

5. Ըստ Ձեզ, ի՞նչ դեր է կատարում աշակերտական խորհուրդը դպրոցի կառավարման հարցում: Արդյոք կարողանում եք տեղ հասցնել աշակերտներին հուզող խնդիրները: Իսկ կարողանո՞ւմ եք մասնակցել դպրոցի համար կարևոր որոշումների կայացմանը: Եթե այո, ապա խնդրում եմ օրինակներ բերեք: Եթե ոչ, ապա ի՞նչ մասնակցություն կցանկանայիք ունենալ:
6. Արդյոք աշակերտական խորհուրդը մասնակցո՞ւմ է դպրոցի ֆինանսատնտեսական գործունության հետ կապված հարցերին: Օրինակ՝ մասնակցում է դպրոցի բյուջեի քննարկումներին, թե ինչի վրա պետք է ծախսել գումարը և այլն: Եթե այո, ապա ինչպե՞ս եք մասնակցում: Եթե ոչ, ապա ի՞նչ կարող է անել աշակերտական խորհուրդը դպրոցի ֆինանսատնտեսական գործունության մեջ, որտեղ եք տեսնում Ձեր դերը:
7. Ի՞նչ մասնակցություն կարող են ունենալ աշակերտները դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներում: Ինչպե՞ս եք պատկերացնում այդ գործընթացը: Երբևէ ունեցե՞լ եք առաջարկություններ դպրոցի բյուջեի պլանավորման հետ կապված: Ներկայացրել եք արդյոք այդ առաջարկությունները դպրոցի տնօրինությանը: Ինչպիսի՞ արձագանք եք ստացել:
8. Որքանո՞վ եք տեղեկացված Ձեր դպրոցի ֆինանսական գործունեության վերաբերյալ: Ծանո՞թ եք արդյոք Ձեր դպրոցի բյուջեի բովանդակությանը: Եթե այո, ապա ինչպես եք ծանոթացել, եթե ոչ ապա ինչ կցանկանայիք իմանալ: Ըստ Ձեզ, որքանո՞վ է թափանցիկ իրականացվում դպրոցի բյուջեի մշակման գործընթացը Ձեր դպրոցում: Արդյոք Ձեր դպրոցի բյուջեն հրապարակվում է: Եթե այո, ապա ինչ տարբերակով: Եթե ոչ ապա, ինչո՞ւ: Արդյոք բյուջեի նախագիծը հասանելի է շահագրգիռ կողմերի և հանրության համար: Իսկ բյուջեի կատարողականը: Եթե ոչ ապա ինչն է պատճառը:
9. Դպրոցի բյուջեի քննարկման նախնական փուլում մասնակցում են նաև աշակերտական խորհուրդի անդամները: Մեր այսօրվա հանդիպման մասնակիցներից որևէ մեկը երբևէ մասնակցել եք նման քննարկման: Եթե այո, ապա ինչպե՞ս է ընթացել քննարկումը: Դուք անձամբ հարցեր կամ առաջարկություններ ունեցե՞լ եք: Եթե այո, ապա ինչպիսի արձագանք եք ստացել:
10. Ի՞նչ առաջարկություններ ունեք աշակերտական խորհուրդի գործունեության բարելավմանն ուղղված: Ըստ Ձեզ, ինչպե՞ս կարող է մասնակցել աշակերտական խորհուրդը կամ աշակերտները դպրոցի ֆինանսների հետ կապված գործունեությանը:
11. Պատկերացրեք, որ Դուք հանդիսանում եք Տնօրեն և/ կամ դպրոցական խորհուրդի անդամ և ունեք սահմանափակ գումար դպրոցի համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար: Ի՞նչ նպատակներով կօգտագործեք այդ գումարն առաջին հերթին: Իսկ ինչ կանեիք, որպեսզի դպրոցի բյուջեի և ծախսերի մասին տեղյակ լինեն բոլոր շահագրգիռ կողմերը: Ինչ պետք է անել, որպեսզի թե՛ ծնողական, թե

մանկավարժական, թե աշակերտական խորհուրդները ակտիվ մասնակցություն ունենան դպրոցի բյուջեի պլանավորման և ծախսերի վերահսկողության գործընթացներում:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Բարև Ձեզ, «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ն իրականացնում է հարցազրույցներ Կապան, Քաջարան և Մեղրի համայնքների ՔՀԿ-ների հետ պարզելու համար, թե ինչպես են վերջիններս գնահատում դպրոցներում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության առկա գործընթացները, որոնք են հիմնական խնդիրները և խնդիրների լուծմանն ուղղված ինչպիսի առաջարկներ ունեն: Խնդրում ենք լինել անկեղծ: Հարցազրույցի արդյունքները վերլուծվելու են ընդհանրական տեսքով և մասնակիցների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

- Շնորհակալություն հայտնեք ժամանակի և պատրաստակամության համար՝ մասնակցելու այս հետազոտությանը:
- Ծանոթացրեք Ձեզ և կազմակերպությունը, որը ներկայացնում եք:
- Բացատրեք հետազոտության հիմնանպատակները:
- Հավաստիացրեք, որ բոլոր պատասխանները կպահվեն ԽԻՍ կոնֆիդենցիալ և որ ստացված տեղեկությունը կօգտագործվի միայն հետազոտական նպատակներով:
- Բացատրեք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ, այլ կան միայն անհատական կարծիքներ:
- Նշեք, որ բոլոր նոթագրումներն ու ձայնագրումները հետապնդում են զուտ մի նպատակ, այն է՝ չկորցնել և չմոռանալ հնչող տեղեկությունը:

Հարցեր

1. Ներկայացրեք խնդրեմ Ձեր կազմակերպությունը: Ներկայումս ի՞նչ ծրագրեր եք իրականացնում, որ ոլորտներին առավել շատ ուշադրություն դարձնում:
2. Իրականացրե՞լ եք արդյոք ծրագրեր, որոնք առնչվում են կրթական համակարգին: Ի՞նչ ծրագրեր են դրանք եղել: Իսկ իրականացնո՞ւմ եք արդյոք ծրագրեր հանրակրթական դպրոցների հետ: Ի՞նչ ծրագրեր են դրանք եղել:
3. Ներկայումս համագործակցո՞ւմ եք արդյոք ստորև նշված կառույցների, հաստատությունների հետ Ձեր տարածաշրջանում կրթական համակարգի բարելավմանն ուղղված ծրագրեր կամ գործողություններ իրականացնելու նպատակով: Եթե, այո ապա յուրաքանչյուր հաստատության համար նշեք, թե կոնկրետ ինչ ձևաչափով եք համագործակցում, կամ համագործակցել:
    - Հանրակրթական դպրոցներ,
    - Մարզպետարան,
    - ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
    - Բարձրագույն ուսումնական հաստատություններ,
    - Մասնավոր հատվածի ներկայացուցիչներ,

- Հասարակական կազմակերպություններ,
- Այլ

Ըստ Ձեզ, որքանո՞վ է արդյունավետ եղել Ձեր համագործակցությունը: Ինչո՞ւ եք այդպես կարծում:

4. Ասացեք խնդրեմ, որքանո՞վ եք տեղեկացված դպրոցներում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության առկա գործընթացներին: Եթե տեղեկացված եք, ապա որտեղից: Ինչո՞ւ է ծագել այդ անհրաժեշտությունը:
5. Իսկ որքանո՞վ եք տեղեկացված հետևյալ մարմինների լիազորությունների մասին դպրոցի բյուջեի պլանավորման և ծախսման մեջ նրանց մասնակցության տեսանկյունից:
   - դպրոցական խորհուրդներ,
   - մանկավարժական խորհուրդներ,
   - ծնողական խորհուրդներ,
   - աշակերտական խորհուրդներ:

   Ըստ Ձեզ, որքանո՞վ են այս խորհուրդներից յուրաքանչյուրը ներգրավված բյուջեի պլանավորման և ծախսման գործընթացներում: Արդյոք բավարար է այդ մասնակցության չափը: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
6. Իսկ ինչպիսի՞ մասնակցություն են ունենում Ձեր համայնքի ՔՀԿ-ները դպրոցների ֆինանսական գործունեության պլանավորման և իրականացման գործընթացներում: Եթե մասնակցություն չունեն, ապա արդյոք դրա անհրաժեշտությունը կա: Ինչպես եք տեսնում Ձեր մասնակցությունը: Ինչ աջակցություն կարող է տալ ՔՀԿ-ն դպրոցին, որպեսզի վերջինիս ֆինանսական գործունեությունը բարելավի:
7. Ըստ Ձեզ, որո՞նք են Ձեր համայնքում դպրոցների ֆինանսական գործունեության հետ կապված հիմնական խնդիրները: Ինչպիսի՞ խնդիրներ եք տեսնում դպրոցների բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացներում:
8. Ներկայումս, որքանո՞վ է թափանցիկ իրականացվում դպրոցների բյուջեի պլանավորման գործընթացները Ձեր համայնքում: Արդյոք հասարակական կազմակերպությունները տեղեկացվում են դպրոցի բյուջեի պլանավորման և ծախսման գործընթացներին: Արդյոք անհրաժեշտություն կա, որ տեղեկացվեն: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
9. Ըստ Ձեզ, ինչպե՞ս կարելի է բարելավել **դպրոցների բյուջեի պլանավորման** գործընթացը: Ինչպիսի՞ դերակատարում կարող է ունենալ Ձեր կազմակերպությունը այս գործընթացում:
10. Ըստ Ձեզ, ինչպե՞ս կարելի է բարելավել **դպրոցների բյուջեի ծախսման գործընթացը**: Ինչպիսի՞ դերակատարում կարող է ունենալ Ձեր կազմակերպությունը այս գործընթացում:
11. Ըստ Ձեզ, ինչպե՞ս կարելի է բարելավել դպրոցների բյուջեի հաշվետվողականության և հանրության համար թափանցիկության գործընթացները: Ինչպիսի՞ դերակատարում կարող է ունենալ Ձեր կազմակերպությունը այս գործընթացում:

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Բարև Ձեզ, «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ն իրականացնում է ֆոկուս խմբային քննարկումներ և հարցումներ Կապան, Քաջարան և Մեղրի համայնքների դպրոցներում տարեկան բյուջեի պլանավորման, ծախսման և հաշվետվողականության գործընթացների հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ստանալու նպատակով: Խնդրում ենք Ձեզ անկեղծ պատասխանել ստորև ներկայացված հարցերին: Ստացված տվյալները վերլուծվելու են ընդհանրական տեսքով, անձնական տվյալները ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

1. Որքանո՞վ եք տեղեկացված Ձեր դպրոցի տարեկան բյուջեի կառուցվածքի մասին: Գնահատեք 1-10 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է, բոլորովին տեղեկացված չեք, իսկ 10-ը լիովին տեղեկացված եք:

1	2	3	4	5	6	7	8	9	10

2. Որքանո՞վ է թափանցիկ իրականացվում դպրոցի բյուջեի մշակման գործընթացը Ձեր դպրոցում: Գնահատեք 1-10 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է, բոլորովին թափանցիկ չէ, իսկ 10-ը շատ թափանցիկ է:

1	2	3	4	5	6	7	8	9	10

3. Մասնակցո՞ւմ եք արդյոք դպրոցի բյուջեի պլանավորման աշխատանքներին:
   1. Այո
   2. Ոչ ***(Անցնել հարց 5-ին)***

4. Եթե այո, ապա ինչպե՞ս եք մասնակցում:
   1. Մասնակցում եմ քննարկումներին
   2. Մասնակցում եմ բյուջեն կազմելու գործընթացին
   3. Իմ կարծիքը հայտնում եմ տնօրենին բանավոր եղանակով
   4. Իմ կարծիքը հայտնում եմ տնօրենին գրավոր եղանակով
   5. Այլ (նշել)_____

6. Եթե ոչ, ապա ցանկություն ունե՞ք արդյոք մասնակցելու:
   1. Այո
   2. Ոչ

Շնորհակալություն